



52. ԱՂՎԵՍՆ ՈՒ ԿՐԻԱՆ

Աղվեսն ու կիրիռն մի կեղին: Էրկու եզ աղվըսուն կեղի, էրկու եզ էլ կիրիռուն կեղի:

Աղվես կերթա մըտ կըրիռեն:

Կասա. - Կիրիռա՛, արե՛՛ս ու դու էղինք ախսընգեր, էրթանք մեզի վար էնենք, մեր էրեխեք չըմեռին անոթի:

Էլան, գացին ուրանց խարոր սարքեցին:

Աղվեսն ասաց. - Կիրիռա՛, ես խոփ ու լուծ մի չունիմ, խոփն ու լուծ մի դո՛ւ պեր, զընջիլն ու փոկն ու կանդդիվն ու գործեվորն ու լուծ մ'էլ ես կը պերեմ:

Կիրիռեն ասաց. - Շնորակալ եմ, վուճալ՝, մեր խարոր սարքըվալ:

Գացին, ուրանց խարոր սագեցին, ասին. - Խըլըսուն պըտի էլինք, էրթանք, վար էնինք Աստուծով:

Աղվեսն ասաց. - Կիրիռա՛, խարցուցել ամոթ չէ՞ խո, ես սերմ չունիմ: Դու սերմ ունի՞ս:

Կիրիռեն ասաց. - Վուճալ՝, ես էլ սերմ չունիմ:

Աղվեսն ասաց. - Ապա իմա՞լ կեղի, կիրիռա՛: Խըլըսուն էլի՛, գնա՛ սերմի:

Կիրիռեն խըլըսուն էլավ, ջըվալ մի առավ, էրկու խաց տըրեց հինե, գնաց սերմի:

Կիրիռեն թըխ էրթա սերմի, մենք տաճմանք վըր աղվըսուն:

Աղվեսն ասաց. - Բալքի կիրիռեն հազընցավ, էրթամ դըրկիցներուց կոտ մի կորեկ առիմ, տամիմ ցանիմ, չուր կիրիռեն գա, էնոնց փոխ կու տամ:

Աղվես գնաց, դըրկիցներու մոտեն կոտ մի կորեկ պերեց, ցանեց: Վարեն պըռծան, դըռ կիրիրա չըկա: Մընաց, իրեք ամիսն օր թըմավ, կիրեկ խասավ, աղվես գնաց, կորեկ քաղեց, պերեց մանդրեց, իստկեց, էրաց սեղծ: Տեսավ, օր կիրիրեն էկավ, առեր կոտ մի կորեկ ու էկավ:

Ասաց. - Պարի օր քյե, աղվես փապեր:

Աղվեսն ասաց. - Նա պարով, մա խերով: Դու մափխեր-մափխըլամաթ էկար: Օր ես մընի քու ումուտով, էս տարի պըտի իմ ճըծեր անոթի մեռեն: Վալա, ես քեզի մեկ ճանգ կորեկ չըմ իտա, դոր կերթաս, գնա:

Աղվեսն ու կիրիրեն էնտեղ խասան իրար, զիրար ծեծեցին:

Գեղական ժողվան, էկան, ասին. - Ջանըմ, էտ ի՞նչ դավի ա, դուք հորի՞ զիրար կը ծեծեք:

Աղվեսն ասաց. - Ախպեր, դու էկե՛ք, տեսե՛ք, էտր օղյաթ, ես վարեր եմ, ցաներ եմ, քաղեր եմ, պերեր եմ, մանդրեր եմ, էրեր եմ սեղծ, մըկա էսի կասա՝ իլահի պըտի կիսեմ: Էսի Աստըծու տա՛նա՛ստա՛ն ա:

Գեղական ասեցին. - Ջանըմ, հորի՞ զիրար կը ծեծեք, էլե՛ք, գացե՛ք հուքմաթ: Հուքմաթ վին օր խասուց, թըխ էղի էնոր:

Աղվեսն ու կիրիրեն էլան, գացին հուքմաթ: Ամեկ զուր դարդ կըլըսա էրաց:

Հուքմաթ մեզեց, ասաց. «Ես ո՞ր մեկի մեխքն առիմ: Էրկու եզ էնոր ա, էրկու եզ էնոր ա, էս տա՛տու՛մ աղվեսն էրեր ա: Էսա հախ կը խասի աղվըսուն: Ես էտոնց ի՞նչ պըտի ճամքախ տամ: Հա՛մա կիրիրեն չըկանա թըռի, աղվես կը թըռի: Ասեմ գացեք, վոն օր թըռավ, սեղծն ընցավ: Թ'էղի էնոր»:

Ասաց. - Արե՛ք, ծեզի ասեմ: Գացե՛ք, օր մեկըտ օր թըռաք սեղծն ընցաք, Թ'էղի էնոր:

Աղվեսն համա ուրախալեն ասաց. - Կիրիրա՛, դ'էլի էրթանք: Էլ ի՞նչ կուզես իմ հոքուց:

Էկան սեղծի մոտ:

Աղվես կիրիրուն ասաց. - Կիրիրա՛, դե թըռի՛:

Կիրիրեն ասաց. - Հա՛ռճին դո՛ւ թըռի, մոր ես կը թըռիմ:

Աղվես համա ուրախ-ուրախ էկավ, թըռավ: Թըռնելու պես չքավ սեղծի օրթալըխ:

Կիրիրեն ուրախցավ, ասաց. - Դ'իճի՛, արե՛, դորն իմն ա:

Աղվեսն օր ի ծնավ, կիրիրեն էնդեխեն խաղալեն էկավ, թըռավ ըզսեղճ, էրկու շենք էլ ընցավ դեն: Համա աղվես ծեռ տըրեց ծոց, խեղճ, մեկ դեխ կայնա՛վ:

Ասաց. - Կիրիրա՛, դու ընծի էլ պան չը՞ս իտա:

Ասաց. - Չէ՛, հորի՞ տամ: Դու վըր ընծի անաստվածութեն կէ-
ցիր, Աստղված կաբուլ չէրաց: Քեզնե առավ, տվեց ընծի: Դոր կեր-
թաս, գնա՛:

Աղվես փոշման ետ տանցավ: Աղվես շուն էր, իրեք խատ կո-
րեկ առավ, տարավ, թալեց պարկի մեջ, պարկ փչեց, ուռավ ու ըզ-
կահիմ պերան կապեց, շալկեց, գնաց ջաղաց:

Ասաց. - Կը տանիմ, թալիմ ջաղաց, իլավա կենեմ վըր ճա-
ղըցալընին, կառիմ պարկ մի ալուր, գամ, իմ ճըժերն ուտեն:

Գնաց ջաղցի տուռ, կղանչեց ճաղըցալընին:

Ասաց. - ճաղըցպա՛ն, արե՛, էն իմ պարկ կորեկ աղա՛: Ես
կերթամ, իմ ճըժեր անոթի են:

Խեղճ ճաղըցպան էլ միամիտ ասաց. - Դի՛ր դատի:

Աղվես տըրեց դան, գնաց: Ուրիշի խատ կեր վըր ջաղցին,
էնի օր ի ծնավ, ճաղըցպան ասաց. «Էլիմ, աղվըսու պարկ կորեկն
աղամ: Խեղճ ա աղվես»:

ճաղըցպան էլա՛վ, պարկ պերեց, պարկի պերան օր արցը-
կեց, պարկի միչեն իրեք խատ կորեկ թըռան, մեկ գանկեց,
ճաղըցալընի աչք թոռցուց, մեկ գանկեց, ճաղցի քար կոտրեց,
մեկն էլ ճաղցի բոտ պատռեց:

ճաղըցպան ծեռ տրեց ծոց, շիվարավ, կայնա՛վ: Քիչ մի
մընաց, տեսավ, օր աղվեսն էկավ:

Ասաց. - ճաղըցպա՛ն, իմ կորեկն աղցե՞ր ես:

Ասաց. - Աղվե՛ս, Ասպած քո տուն ավիրա՛, էս ի՞նչ օղյաթ էր՝
դու խաղցիր իմ գլոխ:

- Հա՛ա՛, - ասաց, - ճաղըցպա՛ն, մախսուս կենես, օր իմ պարկ
կորեկն ուտես էրթա՛:

ճաղըցպան ինչ էրաց, ճար չեղավ խըտ աղվըսուն:

Էլա՛վ, ուր հախ լըցեց աղվըսու պարկ, ասաց. - Աղվե՛ս, դե
գնա՛: Ասպած քո պան չաճողա: Իմալ դու զիմ տուն ավիրեցիր:

ճաղըցպան թըխ մընա մըջ ուր հալին, մենք տանմանք վըր
աղվըսուն:

Աղվես շալկեց պարկ ալուր, գնաց գեղ մի: Գնաց հիրիկուն
տու՛ մի:

Ասաց. - Էսօր ընծի տեղ կուտա՞ք քընիմ, խըլըսուն էլիմ, էրթամ:

Ասին. - Աղվե՛ս, արի՛, պառկի՛ դհս, խըլըսուն էլի՛, գնա՛:

Աղվեսն ասաց. - Ձեզի պա՛մի կասեմ:

Ասին. - Աղվե՛ս, ի՞նչ կասես:

Ասաց. - Ձեզի դիկ մի կա, մուղա՞թ կեցեք, չիգա իմ պարկ պատռա, իմ ալուր թափա: Օր թափեց, խըլըսուն կառիմ ձեր դիկ, կէրթամ:

Ասեցին. - Աղվե՛ս, Աստըված քո տուն ավիրա՛, դիկ թավլեն, թառն ա, քո ալուր տուն ա: Դիկն հորի՞ պըտի գա, քո պարկ պատռա:

Էտոնք օր քընան, աղվեսն էլավ, գնաց, դիկ թառեն պերեց, ըզպարկ պատռեց, ալուր սերսուփ լըցեց դըկու վերեն, տարավ դիկ տրեց ուր տեղ:

Խըլըսուն էլավ, ասաց. - Իմ պարկ պերե՛ք, ես էրթամ:

Քացին, աչքեցին, օր պարկ պոռթուկ, ալուր թափուկ:

Քացին, թառն աչքեցին, օր դիկ ալրոտ, թառն ա:

Ասին. - Աստված աղվըսու տուն ավիրա, էս աղվես իմաստո՞ւն էր:

Աղվեսն էր էլավ, առավ ըզդիկն ու գնաց: Գնաց մեկ ուրիշ գեղ մի, գնաց էտ գեղ, տու՛մի մտավ:

Դու մ'ասի, թե էտոնք էլ սերսուփ քահեղ ձի մի կա:

Աղվեսն ասաց. - Մուղա՞թ կեցեք, օր ձեր ձին չըզանի, իմ դիկ խատու: Օր իմ դիկ խատուց, ձեր ձին կը տանիմ իմ դըկու տեղ:

Էտոնք ծըծղացին վըր աղվըսուն:

Ասին. - Աղվե՛ս, Աստըված քու տուն ավիրա՛, ձին թավլեն, քո դիկ դհս, ձին թավլից կու գա՞, քո դիկ խատու՞:

Աղվեսն ասաց. - Ես ձեզի կասիմ, դու գիտեք:

Էտոնք օր քընան, աղվեսն էլավ, դիկ տրեց քարի տակ, սերսուփ ճընջըխեց, տարավ, թալեց ձիու օտներու մեջ: Էկավ, ուր տեղ քնավ:

Աղվես խըլըսուն էլավ ասաց. - Իմ դիկ պերե՛ք, ես էրթամ:

Դես թըռան, դեն թըռան, դիկ չըկա: Գացին տեսան, օր աղվես աչքեց, տեսավ, օր դիկ ձիու օտներու մեջն ա:

Ասաց. - Ես հիրիկուն ձեզի ասի, ձեր ձին իմ դիկ կը խատուցա, դուք չավատեք:

Աղվես համա էլնվ, գնաց, ծին հանրցըկեց, թըռավ ծիու մի-
ծաց, քշեց գնաց, գնաց մինչև հիրիկուն ճամբան, մեկ գեղի
ռաստ էկավ, տեսավ, օր դիու ու գումեն կը գանին, կը խաղան:

Աղվես դեմ քշեց, գնաց խարսընքի տուռ կայննվ:

Ասաց. - Պանն՝ ձեզի, ախալըրտի՛ք:

Ասին. - Պաննի՛, հազան՝ պանի, աղվես՝ ախալեր:

Էն մեկ մարթն ասաց. - Տըղա՛, վազա՛, աղվեսու ծին պըռ-
նա՛:

Գնաց, աղվեսու ծին պըռնեց, աղվեսն իճնվ, տարան, ծին
կապեցին թնվլեն, ծիու դանման տըվին, աղվեսուն էլ խաց պե-
րին, կերավ: Էտոնք էլնն, քացին ուրանց խարսընքի խեստ:

Աղվեսն ասաց. - Ես խարսի կեսերե վո՞ն ա:

Ասին. - Աղվես՝, հորի՞:

Ասաց. - Ես պըտի պան ասեմ էնոր:

Խարսի կեսերեն էկավ, ասաց. - Աղվես՝, ի՞նչ կասես:

Ասաց. - Քու խարսին մուղա՛թ կեցի, քո խարսին ծամ չըկա:
Գիշեր չըգա իմ ծիու պոչ կըտրա, տանի, էնա ուրին ծամ: Օր կըտ-
րեց, խըլըսուն կառիմ քո խարսն, էրթամ իմ ծիու տեղ:

Խարսի կեսերե ծըծղաց վըր աղվեսուն, ասաց. - Խա՛,
աղվես՝, էսա մարթիք հըմեն թըխ շըհանդ էղնին, օր իմ խարս քո
ծիու պոչ կըտրեց, տարավ, կապեց ուր ծամեր, խըլըսուն իմ
խարս տամ քեզի:

Աղվես գնաց, ռըհաթ ուր տեղ նըստավ: Էտոնք օր ընգան
խարսընքի կալաբալըխի մեչ, էտ պան էլ ո՞ր կը մտածա:

Աղվես գնաց, տեսավ, օր խարս քներ ա: Ուշիկ գնաց ծիու
պոչ կըտրեց, պերեց, խանգորցեց խարսի ծամեր ու գնաց ուր
տեղ պառկավ:

Խըլըսուն շուտ էլնվ, ասաց. - Իմ ծին պերե՛ք, ես խեծիմ
էրթամ, ես հազընցա:

Գացին, ծին պերեցին, օր ծիու պոչ կըտրուկ ա:

Աղվեսն ասաց. - Չէ՞ ես հիրիկուն ձեզի ասեցի, ձեր խարս
իմ ծիու պոչ կը կըտրա:

Գացին տեսան, օր ծիու պոչ խանգուրցուկ ա խարսի ծա-
մեր: Գացին, խարսի կեսերին խաբար տվեցին: Խարսի կեսերեն
էկավ, զըխարսի ծեռ պըռնեց, տարավ, տվեց աղվեսուն:

Ասաց. - Աղվես՝, դե ա՛ռ, գընա՛:

Աղվեսն առավ զխարսն ու գնաց: Գնաց մեկ սարի մի գըլոխ տեսավ, օր ճուշ մի օխչար կեր էնտեղ:

Ասաց. - Վոլ՛ա՛, անոթքեր ենք, էրթանք խովվու մոտ, կոտ մի կաթ առինք, ուտինք, էլինք, էրթանք:

Դեմ էրեցին խովվին, գացին:

Ասին. - Խովի՛վ, պարի՛ լուս քեզի:

Ասաց. - Պարի՛, հազա՛ր պարի, աղվե՛ս ախպեր:

Ասաց. - Խովի՛վ, կանա՛ս կոտ մի կաթ տաս մեզի:

Խովիվն ասաց. - Վըր իմ աչից, աղվե՛ս ախպեր: Կա՛թ էլ կուտամ, խա՛ց էլ կուտամ:

Պերեց, կոտ մի կաթ կըթեց, խաց մ՛ էլ տվեց, կերան:

Ասաց. - Աղվե՛ս ախպեր, կուշտ կերա՞ր: Թե կուշտ չըկերար, կոտ մ՛ էլ կըթեմ:

Աղվեսն ասաց. - Ես կուշտ կերա, կուզես քիչ մ՛ էլ կըթա՛, թը խարս կուշտ ուտա:

Խովիվն ասաց. - Աղվե՛ս, գնա՛, գենա օխչար տարցո՛ւ գա, չուր ես կըթեմ:

Աղվեսն էր, էլ՛ավ գնաց դըխ օխչար, օր օխչար տարցուցեր, չըներ զաղվես տեսան: Առան աղվըսու հետեվ: Խովիվ ուրախացավ: Հա՛ գիդի, հա՛ գիդի, կանչեց, զաղվես էնտեղ պըռնին, չորցուցին:

Խարս մնաց խովվուն: Խովիվն էլ ազաթ էր:

Հիրիկուն էկավ, բռնաց, ասաց. - Էլ ես խըլըսուն չըմ էրթար ձեր օխչար, չըմ էրթար ձեր օխչար:

Ասին. - Ջա՛նըմ, տեսեք խովվուն ի՞նչ էղավ:

Գացին մըտ խովիվ, ասին. - Խովի՛վ, դու խըլըսուն հորի՞ չըս էրթա օխչար:

Ասաց. - Վուա՛լա՛, ես կարքըվեր եմ: Էլ ես չըմ էրթա օխչար: Ահա՛ն, թե չըք ավտա, գո իմ կընիկն էլ ա խըտ ընծի յա:

Խովիվն ըզկընիկ առավ, էկավ տուն: Խովիվն ու կընիկ խասան ուրանց մուրագին: Դուք էլ խասիք ձեր մուրագին:

Աստուծ իճավ իրեք խընծոր, մեկ՝ ասողին, մեկ՝ լըսողին, մեկէլա՛ քուլլի ջաղամաթին: